ՆԱԽԱԳԻԾ 59

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

„___„_____2011 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Առողջապահական համակարգի արդիականացում» երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման N 7987--AM համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.01 կետի «ա» ենթակետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Առողջապահական համակարգի արդիականացում» երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման N 7987-AM համաձայնագիրն ուժի մեջ մտնելու նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին մինչև 2011 թվականի ապրիլի 23-ը հատկացնել 200,000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր» հոդվածով):

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ .....-ԻՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի

1. **<u>Իրավական ակտի անհրաժեշտությունը, նպատակը, հիմքերը.</u>**

«Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Առողջապահական համակարգի արդիականացում» երկրորդ վարկային Համաձայնագրի թիվ 7987-AM լրացուցիչ ֆինանսավորման ուժի մեջ մտնելու պայմաններից մեկն է հանդիսանում Վարկառուի 200.000 ԱՄՆ դոլարին համարժեք սկզբնական դեպոզիտ ունենալու հանգամանքը:

Որոշման նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել

- «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը,
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածը:

2. **<u>Ընթացիկ իրավիճակը, խնդիրները</u>**

Հայաստանի Հանրապետության և Զարգացման միջազգային ընկերակցության միջև 2007 թվականի մարտի 9-ին ստորագրված «Առողջապահական համակարգի արդիականացում» թիվ 4267-ԱՄ երկրորդ վարկային ծրագիրն ավարտվում է 2012 թվականի դեկտեմբերի 31-ին: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված ծրագրի, ինչպես նաև վերջինիս նախորդող թիվ 3920-ԱՄ առաջին վարկային ծրագրի շրջանակներում իրականացված առողջապահական համակարգի արդիականացման գործընթացն ունեցել է բարձր արդյունավետություն, իսկ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում առողջապահական համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունը դեռևս առկա է, ուստի, բարեփոխումների շարունակականությունը ապահովելու նպատակով, Հայաստանի Հանրապետությունն որոշել է դիմել Համաշխարհային բանկին ևս 19.000.000 ԱՄՆ դոլար գումար հատկացնելու խնդրանքով:

Նշված վարկի տրամադրման վերաբերյալ Համաձայնագիրը Կողմերի միջև ստորագրվել է 26.01.2011թվականին: Համաձայնագրի ուժի մեջ մտնելու նախապայման է սահմանվել նաև

Վարկառուի կողմից 200.000 ԱՄՆ դոլարին համարժեք սկզբնական դեպոզիտ ունենալու հանգամանքը:

3. **Կարգավորման նպատակը**

Առաջարկված ՀՀ կառավարության որոշման նախագծի նպատակն է ապահովել վարկային Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.01. կետի ա. ենթակետով նախատեսված ուժի մտնելու նախապայմանը:

4. **Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**

Համաձայն վարկային Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3.01 կետի՝ Վարկառուն ծրագիրը պետք է իրականացնի ՀՀ առողջապահության նախարարության միջոցով, որտեղ ծրագրի անմիջական իրականացման համար պատասխանատու է ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը:

«Առողջապահական համակարգի արդիականացում» երկրորդ վարկային Համաձայնագրի թիվ 7987-AM լրացուցիչ ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմում է 25.330.300 ԱՄՆ դոլար, որից 19.000.000 ԱՄՆ դոլարը տրամադրվում է Համաշխարհային բանկի կողմից, իսկ 6.330.300 ԱՄՆ դոլարը կֆինանսավորվի ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներից: 26.01.2011 թվականին ստորագրված թիվ 7987-ԱՄ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.01. կետի ա. ենթակետի պահանջն ապահովելու համար՝ ՀՀ ԱՆ «ԱԾԻԳ» ՊՀ ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել 200.000 ԱՄՆ դոլար:

5. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է ՀՀ առողջապահության նախարարության, ինչպես նաև ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի համապատասխան մասնագետների կողմից:

6. **Ակնկալվող արդյունքը**

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև սույն թվականի հունվարի 26-ին ստորագրված «Առողջապահական համակարգի արդիականացում» երկրորդ վարկային Համաձայնագրի լրացուցիչ ֆինանսավորման թիվ 7987-ԱՄ վարկային Համաձայնագիրը:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ